ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

ՈՐՈՇՈՒՄ

"26" սեպտեմբեր 2017 թվականի N 158

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐ ԶՎԱՐԹ ԳԵՂԱՄՅԱՆԻՆ ԵՎ ԳԱՐԵԳԻՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԲՈՒԺՄԱՆ ԱՐԺԵՔ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի պահանջներով՝ *որոշում եմ.*

1. Համայնքի բյուջեով նախատեսված 4729 հոդվածի սոց. ծախսերից 73370/յոթանասուներեք հազար երեք հարյուր յոթանասուն/ դրամը փոխանցել "Վ. Նիկողոսյան" Ա/Ձ-ին Զվարթ Թաթոսի Գեղամյանի բուժման արժեք:
2. Համայնքի բյուջեով նախատեսված 4729 հոդվածի սոց. ծախսերից 61050/վաթսունմեկ հազար հիսուն/ դրամը փոխանցել "Վ. Նիկողոսյան" Ա/Ձ-ին Գարեգին Գեղամի Հակոբյանի բուժման արժեք:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՐԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

ՈՐՈՇՈՒՄ

"28" սեպտեմբեր 2017 թվականի N 159

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ մասի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ և 22.1-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով Նարիշա, Ավետիք և Վերուշկա Յոլչյանների դիմումը՝ *որոշում եմ.*

1. Արամուս համայնքի 3-րդ փողոցի 1 հասցեում գտնվող օրինական 0,18հա բնակավայրի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին կից 395,3քմ հողամասի նկատմամբ ճանաչել քաղաքացիներ Նարիշա, Վերուշկա և Ավետիք Յոլչյանների սեփականության իրավունքը:

2. Քանի որ Նարիշա, Վերուշկա և Ավետիք Յոլչյանների կողմից ավել օգտագործվող հողամասը իրենց պատկանող 0,18հա հողամասի 20%-ից ավել է, որը կազմում է 35,3քմ, հետևաբար պարտավորեցնել նրանց մուծելու տվյալ հողակտորի կադաստրային արժեքը, որը կազմում է 43843 (քառասուներեք հազար ութ հարյուր քառասուներեք) դրամ:

3. Նարիշա, Վերուշկա և Ավետիք Յոլչյաններին պատկանող Արամուս համայնքի 3-րդ փողոց 1 հասցեի հողամասում գտնվող (կոդ՝ 07-013-0032-0014) իրենց կողմից ինքնակամ կառուցված 494,82քմ մակերեսով բնակելի տունը և 2,8քմ մակերեսով աստիճանավանդակը (համաձայն հատակագծի) համարել օրինական:

4. Քանի որ Նարիշա, Վերուշկա և Ավետիք Յոլչյանների կողմից ինքնակամ կառուցված 494,82քմ մակերեսով բնակելի տունը և 2,8քմ մակերեսով աստիճանավանդակը կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը՝ օրինականացման համար գումար չգանձել:

5.Ընդունել ի գիտություն

1) Սույն որոշման 1-ին կետով նշված 395,3քմ ինքնակամ զբաղեցրած հողամասը համայնքի գոտեվորման սխեմայով նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակության օգտագործման համար, հողամասի օգտագործումը չի խոչնդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը, ինչպես նաև ընդգրկված չէ ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում:

2) Սույն որոշման 3-րդ կետով նշված շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, ինչպես նաև վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը: Շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

6.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՐԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

ՈՐՈՇՈՒՄ

"29" սեպտեմբեր 2017 թվականի N 160

ԱՆԱՀԻՏ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 1-րդ կետի 4-րդ ենթակետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով՝ *որոշում եմ.*

1.Անահիտ Գեղամի Ղազարյանին տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Արամուս համայնքի Տիգրանաձորի խճուղի 4/1/4 հասցեի հողամասում հասարակական սպասարկման օբյեկտի վերակառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՐԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

ՈՐՈՇՈՒՄ

"02" հոկտեմբեր 2017 թվականի N 161

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐ ՊԵՐՃՈՒՀԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ, ԱՆԱՀԻՏ ՍԱՄՎԵԼՅԱՆԻՆ ԵՎ ՄԱՐԻԱՄ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի պահանջներով՝ *որոշում եմ.*

1.Համայնքի բյուջեով նախատեսված 4729 հոդվածի սոց. ծախսերից 60000/վաթսուն հազար/դրամ տալ Պերճուհի Վարուժանի Գևորգյանին՝ ֆինանսական օգնություն:

2.Համայնքի բյուջեով նախատեսված 4729 հոդվածի սոց. ծախսերից 50000/հիսուն հազար/դրամ տալ Անահիտ Սարգսի Սամվելյանին՝ ֆինանսական օգնություն:

3.Համայնքի բյուջեով նախատեսված 4729 հոդվածի սոց. ծախսերից 50000/հիսուն հազար/դրամ տալ Մարիամ Սամվելի Սարգսյանին՝ ֆինանսական օգնություն:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՐԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

ՈՐՈՇՈՒՄ

"02" հոկտեմբեր 2017 թվականի N 162

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՄԱՐԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՈՒՄՄԱՆ ԱՐԺԵՔ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի պահանջներով՝ *որոշում եմ.*

1. Համայնքի բյուջեով նախատեսված 4729 հոդվածի սոց. ծախսերից 30000/երեսուն հազար/ դրամը փոխանցել "Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ" ՊՈԱԿ-ին՝ Սոֆյա Մանվելի Պողոսյանի ուսման արժեք:

2.Համայնքի բյուջեով նախատեսված 4729 հոդվածի սոց. ծախսերից 30000/երեսուն հազար/ դրամը փոխանցել "Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ" ՊՈԱԿ-ին՝ Սյուզաննա Հակոբի Հակոբյանի ուսման արժեք:

3.Համայնքի բյուջեով նախատեսված 4729 հոդվածի սոց. ծախսերից 30000/երեսուն հազար/ դրամը փոխանցել Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանին՝ Երազիկ Աշխարհաբեկի Փիլիպոսյանի ուսման արժեք:

4.Համայնքի բյուջեով նախատեսված 4729 հոդվածի սոց. ծախսերից 30000/երեսուն հազար/ դրամը փոխանցել "Երևանի պետական համալսարան" ՊՈԱԿ-ին՝ Մարիամ Եփրեմի Աղայանի ուսման արժեք:

5.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՐԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ